

2011

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՁԵՌՆԱՐԿ

«ՀՅՈՒՄԻՍ - ՀԱՐԱՎ ԸԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
2-ՐԴ և 3-ՐԴ ՓՈՒԼԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ
ԸԱՆԱԶՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ



A. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագիրը ՀՀ կառավարության նախաձեռնությամբ իրականացվող խոշոր ենթակառուցվածքային ծրագիր է, որի նպատակը միջազգային չափանիշներին բավարարող տրանսպորտային ուղիներով երկրի հարավը հյուսիսի հետ կապելն ու դեպի միջազգային շուկաներ ելքի ապահովումն է: Ծրագիրը կիրականացվի փուլերով, որի վերջնադրյունքում կունենանք Բավրայից (Վրաստանի հետ սահման) մինչև Մեղրի (Իրանի հետ սահման) ձգվող միջազգային չափանիշներին համապատասխանող ավտոճանապարհ, ժամանակակից սահմանային և մաքսային ենթակառուցվածքներ, ճանապարհային միջանցքի արդյունավետ կառավարման համակարգ:

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի 2-րդ և 3-րդ փուլերի շրջանակներում ավտոճանապարհը հատելու է Արագածոտնի մարզի և Շիրակի մարզի որոշ համայնքների մասնավոր և համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերի ու գույքի սահմանները:

Վերջիններս, ՀՀ Կառավարության 27 մայիսի 2010թ. 931-Ն որոշմամբ (որոշման փոփոխությունը 23 հունիսի 2011 թվականի 977-Ն որոշում) ճանաչվել են որպես բացառիկ գերակա հանրային շահի ազդեցության ենթակա տարածքներ և կօտարվեն Հայաստանի Հանրապետությանը՝ որպես սեփականություն:

B. ՈՎՔԵՐ ԵՆ ԴԻՏԱՐԿՎՈՒՄ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԻՔ

Այդպիսի անձինք են դիտարկվում բոլոր այն սեփականատերերը, սեփականության իրավունք ունեցողները, վարձակալները և օգտագործողները, ում հողատեսքերը և կամ շինությունները՝ մասնակի կամ ամբողջությամբ, ճանաչվել են որպես բացառիկ գերակա հանրային շահի ազդեցություն կրող տարածքներ:

C. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Ազդեցության ենթական անձիք իրավունք ունեն տեղեկացված լինել ծրագրին վերաբերող ողջ գործընթացի մասին:
2. Իրավունք ունեն համաձայնել կամ հրաժարվել իրենց սեփականության պետությանը օտարելու մասին պայմանագրի տակ ստորագրելուց:
3. Իրավունք ունեն պահանջելու, որ օտարվի իրենց գույքի ոչ միայն այն հատվածը, որը ենթակա է ծրագրի ազդեցությանը, այլև տվյալ գույքն ամբողջությամբ:
4. Որոշակի հարցերում անհամաձայնություն ունենալու դեպքում իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով դիմել դատարան:

D. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ազդեցության ենթակա անձիք պարտավոր են հնարավորություն տալու լիազոր մարմինին՝ օտարման ենթակա գույքի նկարագրության արձանագրությունը կազմելու համար:
2. Լիարժեք փոխհատուցում ստանալու համար, ազդեցության ենթակա անձիք պարտավոր են տրամադրել հավաստի տեղեկություններ և ներկայացնել պահանջվող բոլոր փաստաթղթերը:
3. Պայմանագրի ստորագրումից և համարժեք փոխհատուցում ստանալուց հետո, պարտավոր են իրենց գույքի համապատասխան իրավունքները փոխանցել Հայաստանի Հանրապետությանը:
4. Շենքերի, շինությունների օտարման պարագայում, պարտավոր են սահմանված ժամկետում տեղափոխել շարժական գույքը, որից հետո այդ գույքի համապատասխան իրավունքները փոխանցել Հայաստանի Հանրապետությանը:

E. Ձեռքբերողի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ազդեցության ենթակա գույքի սեփականատիրոջ կողմից օտարման գործընթացին խոչընդոտելու կամ անհամաձայնության դեպքում, ձեռքբերողն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան և եթե վճիռ կայացվի հօգուտ ձեռքբերողի, ապա ըստ այդմ դառնալ օրինական սեփականատերը՝ փոխհատուցման գումարը նախապես ի պահ տալով բանկի դեպոզիտային հաշվեհամարին:

F. Ձեռքբերողի ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ձեռքբերողը պարտավոր է ազդեցության ենթակա անձանց պատշաճ իրազեկել իրենց գույքի մասով բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու կառավարության որոշման մասին:
2. Ձեռքբերողը պարտավոր է ներգրավել անկախ գնահատողի, ում կողմից, համապատասխան չափորոշիչների սկզբունքով, կհաշվարկվի օտարվող գույքի շուկայական արժեքը:
3. Ձեռքբերողը պարտավոր է պայմանագրի ստորագրումից հետո, սահմանված ժամկետում, փոխհատուցման գումարը փոխանցել բանկի դեպոզիտ հաշվեհամարին:
4. Ձեռքբերողը պարտավոր է ապահովել ազդեցության ենթակա անձանց օրինական իրավունքների պահպանմանը խոչընդոտող գործընթացների կարգավորումը(հիմնականում համապատասխան պետական մարմինների հետ անհարկի քաշքշուկները վերացնելու մասով):

G. ՓՈՆԶԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները և սկզբունքները
1.Գյուղատնտեսական հողերի վերջնական կորուստ	ԱԵՏՏ–ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերը անկախ ազդեցության աստիճանից	Լրիվ գրանցում ունեցող սեփականատեր	Կանխիկ փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/, կամ փոխանակում ԱԵՏՏ համար ընդունելի մեկ այլ հողակտորով:
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր	ԱԵԱ հնարավորության դեպքում պետք է ստանան օրինական կարգավիճակ և փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով:
		Վարձակալ	Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, էլնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի “շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ գումարած 15%” –ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ < 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) < 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3) < 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) >25 տարի՝ հողի արժեքի 25%

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները և սկզբունքները
		Առանց սեփականության իրավունքի կամ վարձակալության իրավունքի ԱԵԱ	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/` հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1)<1 տարի` հողի արժեքի 5%; 2)<15 տարի` հողի արժեքի 14%; 3)<25 տարի` հողի արժեքի 20%; 4) >25 տարի` հողի արժեքի 25%:
2. Ոչ գյուղատնտեսական հողեր	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց առևտրային նշանակության կամ բնակելի հողերը	Լրիվ գրանցում ունեցող սեփականատեր	Կանխիկ փոխհատուցում` շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/+15%, կամ փոխանակում ԱԵՏՏ համար ընդունելի մեկ այլ հողակտորով:
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր	Փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով:
		Վարձակալ	Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր` շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա , ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի “շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/` գումարած 15%” –ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով` 1)<1 տարի` հողի արժեքի 5%; 2)<15 տարի` հողի արժեքի 14% ;3) <25 տարի` հողի արժեքի 20%; 4) >25տարի` հողի արժեքի 25%
		Առանց սեփականության իրավունքի կամ վարձակալության իրավունքի ԱԵԱ	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/` հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1)<1)1 տարի` հողի արժեքի 5%; 2)<15 տարի` հողի արժեքի 14%; 3)<25 տարի` հողի արժեքի 20%; 4) >25 տարի` հողի արժեքի 25%:
3. Բնակելի կառույցներ		Բոլոր ԱԵՏՏ-ները` անկախ սեփականության իրավական գրանցման կարգավիճակից	Շինության կորստի դեպքում` կանխիկ փոխհատուցում փոխարինման ողջ արժեքը + 15%` առանց ամորտիզացիոն մասնահանումների և գործարքի համար ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ համաձայնությամբ` փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Վերաբնակեցվող	Վերաբնակեցման և զգալի ազդեցություն կրելու

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները և սկզբունքները
		վարձակալ	նպաստ՝ նշված սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում:
4.Ոչ բնակելի կառույցներ/գույք		Օրինական գրանցման կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ	Շինության կորստի դեպքում՝ կանխիկ փոխհատուցում փոխարինման ողջ արժեքը + 15%՝ առանց ամորտիզացիոն մասնահանումների և գործարքի համար ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ-ի համաձայնությամբ՝ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Առանց սեփականության իրավունքի կամ վարձակալության իրավունքի ԱԵԱ	Փոխհատուցումը կիրականացվի վերոհիշյալ սկզբունքով, կառույցի օրինականացման/գրանցման դեպքում:
		Վերաբնակեցվող վարձակալ	Վերաբնակեցման և զգալի ազդեցություն կրելու նպաստ՝ նշված սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում:
5.Շնչհանուր սեփականության միջոցներ	Համայնքային/հասարակական գույք	Համայնք/կառավարություն	Համայնքի/պետության իրավասու մարմնի համաձայնությամբ կորցրած կառույցների վերակառուցում և նրանց գործառույթների վերականգնում:
6.Բերք	Ազդակիր բերքի զանգված	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից	Բերքի կանխիկ փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:
7.Ծառեր	Ազդակիր ծառեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից	Կանխիկ փոխհատուցում շուկայական արժեքով՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:
8.Ձեռնարկատիրություն/ գործարարություն	Ձեռնարկատերեր/գործարարներ	Բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից	Ձեռնարկատեր/անհատ ձեռներեց, ա) (մշտական ազդեցություն) միանվագ փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով; բ) (ժամանակավոր ազդեցություն) զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Փոխհատուցումը հիմնված է հարկային հայտարարագրի վրա: Հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ը կստանա վերականգնման նպաստ առավելագույն չհարկվող աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով՝

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները և սկզբունքները
			<p>մինչև 1 տարի: Առավելագույն չհարկվող աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին:</p> <p>Մշտական աշխատողներ/ աշխատակիցներ. ա) (մշտական ազդեցություն) վեց ամսվա կորցրած միջին ամսեկան աշխատավարձի չափով գումարի տրամադրում; բ) (ժամանակավոր ազդեցություն) մինչև վեց ամիս միջին ամսեկան աշխատավարձի չափով գումարի տրամադրում՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամսիների հաշվարկով:</p>
9.Օժանդակություն զգալի ազդեցությունների դեպքում	<p>> 10% գյուղատնտեսական եկամտի կորուստ կամ վերաբնակեցում</p>	<p>Զգալիորեն տուժած բոլոր ԱԵՏՏ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները</p>	<p>1) Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողի մեկ տարվա բերքի չափով միանվագ փոխհատուցում:</p> <p>2) 6 ամսվա վերաբնակեցման նպաստ վերաբնակեցման համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:</p>
10.Օժանդակություն վերաբնակեցման դեպքում	<p>Տրանսպորտի և տեղափոխումների ծախսեր</p>	<p>Տեղահանված բոլոր ԱԵԱ, ներառյալ վարձակալները</p>	<p>Տրանսպորտային և մեկ ամսվա համար կենսապահովման ծախսերը հոգալու համար բավարար գումարների տրամադրում:</p>
11.Օժանդակություն սոցիալապես խոցելի անձանց		<p>Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող և/կամ/ կանանց և/կամ/ տարեց անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ</p>	<p>6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական օժանդակության տրամադրում: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ:</p>
12.Ժամանակավոր ազդեցություն		<p>Բոլոր ԱԵՏՏ</p>	<p>Պատշաճ վարձակալություն և վերականգման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի/սեփականության համար:</p>
13.ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն			<p>Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՆ կանդիդատնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը, ըստ վերոհիշյալ պայմանների:</p>

H. ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հիմնականում հողերի ապօրինի զավթողները կօրինականացվեն, բացառություն կհանդիսանան “Կարմիր գոտում” (տե՛ս ՀՀ հողային օրենսգիրքը, Հոդված 60) գտնվող հողերի զավթողները:
2. Օրինականացման նպատակով ԱԵԱ-ները պետք է սկսեն գործընթացը՝ համաձայն համապատասխան վարչարարական կանոնակարգերի: ԻԳ-ն օժանդակություն կցուցաբերի օրինականացնել ցանկացող ԱԵԱ-ներին և կհեշտացնի վերջիններիս օրինականացման գործընթացը:
3. Իրավական կարգավիճակ չունեցող ձեռնարկատիրական գործունեության գրանցման համար ծախսերի և օտարման ենթական հողատարածքներում իրականացվող գործունեության լիցենզիայի համար սահմանված պետական տուրքի ամբողջ գումարը կփոխհատուցվի:

I. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Դժգոհությունների բավարարման գործընթացը կիրականացվի ստորև ներկայացվող քայլերի շրջանակներում.

1. Նախ՝ բողոքներն անհրաժեշտ է փորձել լուծել համայնքի մակարդակով՝ համայնքային ղեկավար մարմինների և ոչ պաշտոնական միջնորդների ներգրավմամբ:
2. Եթե այդպիսով բողոքները չեն լուծվում, դիմում–բողոք կարող է ներկայացվել Տրանսպորտի և կապի նախարարություն/ՏԿՆ/, որն էլ իր հերթին կհասցեագրի դրանք Իրականացնող գործակալությանը/ԻԳ/: 15 օրվա ընթացքում ՏԿՆ պետք է հայցը մերժի կամ առաջարկի ԻԳ դրա լուծումը ԱԵԱ կողմից ներկայացված պայմաններով:
3. Եթե ՏԿՆ և ԻԳ միջամտությունից և աջակցությունից հետո բողոքը չի լուծվել, ապա ՏԿՆ այն պետք է ներկայացնի Ծրագրի Կառավարման Խորհրդին /ԾԿԽ/՝ բողոքի լուծման կամ դատարան դիմելու վերաբերյալ նրանց կարծիքը ստանալու նպատակով: Ընդ որում ԱԵԱ իր բողոքը պետք է ներկայացնի ՏԿՆ-ից նախնական բողոքի վերաբերյալ պատասխան ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում և պետք է իր պահանջը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնի: ԾԿԽ-ն պետք է պատասխանի բողոքին դրա գրանցումից հետո 15 օրվա ընթացքում: ԾԿԽ որոշումը պետք է համապատասխանի ՀՕՏԾ-ի դրույթներին:
4. Եթե բողոքների քննարկման համակարգը չի բավարարում ԱԵԱ բողոքը, նրանք կարող են հայցով դիմել համապատասխան դատարան:

Այնուամենայնիվ, բողոքարկման վերոնշյալ մեխանիզմը չի սահմանափակում քաղաքացու դատարան դիմելու իրավունքը՝ բողոքարկման գործընթացի առաջին իսկ փուլում:

ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարություն

Ծրագրի Իրականացման Գրասենյակ (ՕԻԳ)

Հեռ: +374 10 59 01 47

www.mtc.am



ԱԶԲ-Ասիական Զարգացման Բանկ

Հայաստանյան գրասենյակ

26/1 Վ.Սարգսյանի.

Էրեբունի Պլազա Բիզնես Կենտրոն

Հեռ: +374 10 54 63 71 ~ 73

www.adb.org



Asian Development Bank